Նաիրա Պողոսյան[1]

«ՕՏԱՐԻ» ԿԵՐՊԱՐԸ ԱՅՇԵ ՔՈՒԼԻՆԻ «ՀՐԱԺԵՇՏ. ՄԻ ԱՌԱՆՁՆԱՏՈՒՆ ԳԵՐՅԱԼ ՔԱՂԱՔՈՒՄ (1918-1924)» ՎԵՊՈՒՄ[2]

Բանալի բառեր՝ *Այշե Քուլին, հայեր, հույներ, ատելության խոսք, թուրքական գրականություն*

Ոչ մուսուլմանների և մասնավորապես՝ հույների ու հայերի բացասական կերպարի տարածումը քսաներորդ դարի թուրքական (օսմանյան) գրականության մեջ սկիզբ առավ բալկանյան պատերազմներում օսմանյան պարտություններից հետո: 1919-1922 թթ. հունական զորքերի առաջխաղացումը նախկին Օսմանյան կայսրության տարածքներում ավելի խորացրեց այս միտումը: 1923 թ. Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո Մուսթաֆա Քեմալի անմիջական ուղղորդմամբ թուրքական «ազգային ինքնության» ձևավորման համատեքստում ոչ մուսուլմանները «մենք-նրանք» հակադրության կարևորագույն բաղադրիչը դարձան: Հասարակական ընկալման մեջ հայերի և հույների «օտարացման, թիրախավորման» էվոլյուցիան կարելի է տեսնել՝ համեմատելով նույն հեղինակի տարբեր տարիներին գրված ստեղծագործությունները: Օրինակ, հայտնի գրող Հուսեյն Ռահմի Գյուրփընարը 1912 թ. գրված «Ամուսնություն գիտաստղի ներքո» վեպում համերաշխության, միասնականության հումանիստական գաղափարներ է ներկայացնում, իսկ արդեն 1925 թ. հրատարակված «Մի՞թե ես խելագար եմ» վեպում բացահայտորեն թիրախավորում է հույներին ու հայերին. «Հայաստանն ու Հունաստանը հարձակվեցին մեզ վրա: Դուք, հայերդ ու հույները, մեր երկրում մակաբույծի պես ապրեցիք, իրական տերերից ավելի հարուստ եղաք: Բայց այսպես երկար չի շարունակվելու: Տերը կսկսի ղեկավարել և դուք կլինեք նրա ստրուկները»[3]: Այս ոճը բնորոշ է 1920-1930-ականների բոլոր թուրք

---

[1] Բ.գ.թ., ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ, էլ. փոստ՝ nairapoghosyan@ysu.am

[2] *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18-6B325 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

[3] Millas H., The image of the Greek minority of Istanbul in Turkish literature: past and recent tendencies http://www.herkulmillas.com/en/hm-articles/75-literary-critisizm/426-the-image-of-the-greek-minority-of-istanbul-in-turkish-literature-past-and-recent-tendencies.html (մուտքի ամսաթիվ՝ 05.08.2020)

արձակագիրներին: Հույն հետազոտող Հ. Միլլասի հաշվարկով, օրինակ, նշանավոր թուրք գրող Օմեր Սեյֆեդդինի 163 պատմվածքներում կա հույնի 43 ոչ անձնավորված, հավաքական կերպար՝ բոլորն էլ բացասական[4]: Հետագա տարիներին բացահայտ այլատյացությանը զուգահեռ ի հայտ եկան նաև ոչ մուսուլմանների կերպարները հումանիզմի դիրքերից լուսաբանող սահմանափակ ստեղծագործություններ, որոնցում սակայն միևնույնն է լռության էին մատնված Թուրքիայում արգելված թեմաների շարքին դասվող Հայոց ցեղասպանության կամ թուրք-հունական բնակչության փոխանակման խնդիրները[5]: 1990-ականներից այս կիսադրական ընկալմանը ավելացավ նաև «նոստալգիկ» նոտա, որի համատեքստում Ջանան Թանի, Ֆերիդե Չիչեքօղլուի, Արաս Օրենի և այլ գրողների ստեղծագործություններում հույներն ու հայերը ներկայացվում են որպես Թուրքիայի և մասնավորապես Ստամբուլի պատմական կերպարի ձևավորման հարցում կարևոր դեր ունեցած և ժամանակի հետ քաղաքից «անհետացած» մարդիկ: Ոչ մուսուլմանների կերպարի այս փոխակերպումներին զուգահեռ «բացասական» քարոզչական պատկերները ևս պահպանում են իրենց տեղը գրականության մեջ:

Թուրքաբնակ ոչ մուսուլման փոքրամասնություններին թիրախավորող ժամանակակից թուրք հեղինակներից է Այշե Քուլինը[6]: Կին-գրողի հանրային ելույթներում կարմիր թելի պես անցնում է իր մոր մորաքրոջ Սաբահաթի ամուսնու՝ ազգությամբ հայ Արամ Բալայանի կերպարը: Ցեղասպանությունից հետո Մերզիֆոնից

---

[4] Millas H., The Contrasting Images of Greeks in Turkish Literature:Fiction versus Memoirs, http://www.herkulmillas.com/en/hm-articles/75-literary-critisizm/352-the-contrasting-images-of-greeks-in-turkish-literature-fiction-versus-memoirs.html (մուտքի ամսաթիվ՝ 05.08.2020)

[5] Հայկական թեմատիկային 20-րդ դարի թուրք գրականության անդրադարձների մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ, Երևան, 2010: Հունական թեմայով անդրադարձների մասին տե՛ս Millas H., The image of the Greek minority of Istanbul in Turkish literature: past and recent tendencies http://www.herkulmillas.com/en/hm-articles/75-literary-critisizm/426-the-image-of-the-greek-minority-of-istanbul-in-turkish-literature-past-and-recent-tendencies.html____(մուտքի ամսաթիվ՝ 05.08.2020)

[6] Ժամանակակից թուրք գրող և հասարակական հայտնի գործիչ Այշե Քուլինը ծնվել է 1941 թ. Ստամբուլում, սովորել է ամերիկյան քոլեջում, ապա կրթությունը շարունակել Մեծ Բրիտանիայում: 1980-ականներից ծավալելով ակտիվ գրական և լրագրողական գործունեություն՝ նա գրականության ոլորտում բազմաթիվ մրցանակների է արժանացել, 2017 թ. UNICEF-ի բարի կամքի դեսպան է: Այշե Քուլինի վեպերը ոչ միայն շարունակաբար պահպանում են վաճառքի առաջատարների դիրքերը Թուրքիայում, այլև թարգմանվում ամենատարբեր լեզուներով: Տե՛ս https://www.haberler.com/ayse-kulin/biyografisi/ (մուտքի ամսաթիվ՝ 09.08.2020)

Ստամբուլ տեղափոխված ընտանիքի պատմությունը Ա. Քուլինը կիրառում է ցեղասպանության իրողությունը ժխտելու համար. «Հայերին չենք ցեղասպանել, դա գիտեմ, որովհետև նախ պատմությունն ուսումնասիրել եմ, նաև մորաքրոջս ամուսինն է նպաստել: Եթե արևելյան նահանգները օկուպացրած ռուսական զորքերին հայերի աջակցությունն ու ռուսական համազգեստով մեր դեմ վերջիններիս կռվելը կանխարգելելու նպատակով նրանց սպանեին, այլ ոչ թե տեղահանեին, ես երբեք չէի ծանոթանա իմ սիրելի մորաքրոջ ամուսնու հետ: Նրանից չէի լսի հայկական դեպքերի մասին: Երբեք չէի իմանա անմեղ հայերի տանջանքները, որի պատճառը մենք ենք եղել: Մորս մորաքրոջ ամուսինը ինձ չէր կարողանա պատմել, որ դեռ երեխա էր, երբ մի երեկո ընթրիքի ժամին նրանց տուն անսպասելիորեն մտան ժանդարմները, տարան նրա հորն ու հորեղբորը: Ցեղասպանություն նշանակում է սպանված լինել: Եթե թուրքերը ցեղասպանություն անեին, փեսայիս, նրա եղբայրներին, քույրերին ու մորը Մերզիֆոնի իրենց տանը մի երեկո կգնդակահարեին, տղամարդկանց տանելու դեպքից հետո մի որոշ ժամանակ անց կանայք չէին կարողանա հապշտապ վաճառել ունեցվածքն ու երեխաների հետ տեղափոխվել Ստամբուլ»[7]: Դեռ 2006 թվականին Այշե Քուլինի կողմից շրջանառության մեջ դրված և մինչև օրս էլ նրա կողմից ժամանակ առ ժամանակ վերաշարադրվող այս պատմության մանրամասների շուրջ հեղինակի մեկնաբանությունները դժվար է տեղավորել տրամաբանության շրջանակներում: Ինչպես արդարացիորեն նշում է լրագրող Քյուրշաթ Բումինը, Ա. Քուլինի պնդումները հակասում են նույնիսկ Թուրքիայի քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածում ցեղասպանության ձևակերպմանը: Նույն լրագրողի հոդվածից նաև տեղեկանում ենք, որ Արամ Բալայանը, ով հայտնի է նաև Բալա անունով, Սաբահաթի հետ ամուսնանալու համար պարտադրված է եղել իսլամ ընդունել, ինչը ևս կարող է դիտարկվել որպես ցեղասպանական արարք: Թուրք պատմաբան, գրականագետ Մուրադ Բելգեն էլ, Ա. Քուլինի գնահատականներին անդրադառնալով, սարկազմով նշել է, որ եթե Թուրքիայի պես երկրում թուրք մտավորականը չի ասում «կոտորած չի եղել», պետք է շնորհակալ լինել[8]:

---

[7] Enişte ve Türk Ceza Kanunu, https://www.yenisafak.com/yazarlar/kursatbumin/enite-ve-turk-ceza-kanunu-2341 (մուտքի ամսաթիվ՝ 03.08.2020)

[8] Ayşe Kulin'in Ermeni eniştesi, http://www.radikal.com.tr/yazarlar/murat-belge/ayse-kulinin-ermeni-enistesi-796561/ (մուտքի ամսաթիվ՝ 03.08.2020)

Հայոց ցեղասպանության վերաբերյալ Ա. Քուլինի մերժողական հռետորաբանության ամենասուր օրինակը դարձավ 2014 թ. փետրվարի նրա ելույթը: Գրողը հեռուստաեթերից հայտարարել էր, որ Հրանտ Դինքի սպանության մեղավորներին գտնելու հարցում որպես Թուրքիայի քաղաքացի պատասխանատվություն է կրում, սակայն **հայկական ցարդերի համար իրեն մեղավոր չի զգում, ապա** հավելել. «Չեմ հավատում, որ դա ցեղասպանություն է եղել... **Ես հայերին շատ եմ սիրում, բայց դա տեղահանություն էր: Պատերազմի ընթացքում տեղի ունեցած դեպք: Պատերազմի տարիներին տեղի ունեցածը դժվար է ցեղասպանություն կոչել ... մենք հանկարծակի չսկսեցինք նրանց կոտորել, ինչպես դա եղավ հրեաների դեպքում»**[9]**:** Ա. Քուլինի այս հայտարարությունից հետո մի շարք թուրք մտավորականներ հանդես եկան «Ուզում ենք, որ Այշե Քուլինն ամաչի» նախաձեռնությամբ, որին միացավ շուրջ 1500 մարդ[10]: Լրագրող **Յալչըն Յուսուֆօղլուն, մեկնաբանելով Քուլինի ելույթը, գրել էր. «Պարզվում է, հայերին սիրում է: Պետք չի, մի սիրի: Նրանք քո սիրո կարիքը չունեն: Միայն մի ժխտիր նրանց տատերի ու պապերի զանգվածային սպանությունը, այսինքն մարդ եղիր, այդքանը բավական է»**[11]**: Պոլսահայ Անի Բալըքչըն՝ թուրքական բանակում ապրիլի 24-ին սպանված Սևան Բալըքչրի մայրը, իր ֆեյսբուքյան էջում խստորեն քննադատեց Ա. Քուլինի խոսքերը**[12]**: Գրողի հասցեին խիստ քննադատություն հնչեց նաև «Ազոս»** թերթի էջերից: Պատասխան հայտարարությամբ հանդես գալով՝ Այշե Քուլինը փորձեց հակափաստարկներ բերել. «Ուզում էի ասել, որ հայերի նկատմամբ այստեղ արվածը տարբերվում է հրեաների նկատմամբ արվածներից: Հայերն ու թուրքերը ահավոր պատերազմի մեջ էին, իրար դեմ պատերազմելով են սպանվել: Պատերազմները սարսափելի են: Ամեն պատերազմ իրականում կոտորած է: Ես թուրքերի մեղավորության մասն ընդունում ու ձեր

[9] Ayşe Kulin: Biz, Ermenileri Yahudiler gibi durup dururken kesmeye başlamadık https://t24.com.tr/haber/ayse-kulin-biz-ermenileri-yahudiler-gibi-durup-dururken-kesmeye-baslamadik,250218 (մուտքի ամսաթիվ՝ 05.09.2020)

[10] Ayşe Kulin'in utanmasını istiyoruz https://www.change.org/p/everest-yay%C4%B1nlar%C4%B1-ay%C5%9Fe-kulin-in-utanmas%C4%B1n%C4%B1-istiyoruz (մուտքի ամսաթիվ՝ 05.09.2020)

[11] Soykırım yapmadık sendromu http://avrupasurgunleri.com/soykirim-yapmadik-sendromu/ (մուտքի ամսաթիվ՝ 03.07.2020)

[12] Sevag'ın annesinden Ayşe Kulin'e sitem, http://www.norzartonk.org/sevagin-annesinden-ayse-kuline-sitem/ (մուտքի ամսաթիվ՝ 02.07.2020)

ցավը կիսում եմ, նույն թվականներին Բալկաններից ու Կովկասից տեղահանված ընտանիքից եմ, ինչպե՞ս կարող եմ չհասկանալ, չկարեկցել: Ներողություն եմ խնդրում իմ ասածի համար, որ սխալ է ընկալվել: Ձեզնից ներողություն խնդրելով՝ միևնույնն է, շարունակում եմ կարծել, որ 1915 թ. տեղի ունեցածը ցեղասպանություն չէր, քանի որ սիրտս ինձ անընդհատ հուշում է, որ թուրքերը հայերին վերացնելու նպատակ չեն ունեցել»[13]: Հետագայում էլ շարունակելով այս գիծը՝ Քուլինը բազմիցս շեշտել է, որ հայերի տեղահանությունն արդարացված է եղել. «...Մարդիկ քրիստոնյա են և քրիստոնյա պետությունը եկել ու ասում է «Հողը տալու եմ»: Կռվող ժողովրդի բանակի հրամանատարների իրավունքն է տեղահանություն կազմակերպել: Նույնիսկ Ամերիկան է Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ճապոնացիներին տեղահանել... Պատերազմ էր, շատերն էլ հիվանդությունից են մահացել: Գիտեմ, որ սարսափելի ողբերգություն է եղել: Բայց սա հայերի ազգը ոչնչացնելու միտված գործողություն չէր, հրեաների նկատմամբ նացիստների իրականացրածի հետ համեմատելի չէ»[14]:

Ցեղասպանության փաստը ժխտելով՝ Այշե Քուլինը քննադատում է նաև հայկական սփյուռքի գործունեությունը. «Այսօր հայկական սփյուռքի արածները վերին աստիճանի անօգուտ, անտեղի և չափազանցված եմ համարում: Աշխարհի ամեն քաղաքում, որտեղ գեթ մեկ հայ կա, չգիտեմ ինչ հուշարձան դնելուց անմիտ բան չի կարող լինել: Եղածն եղել է: Նախ հանրապետության ժամանակ չի եղել, երկրորդ մեղավորներին կախել են: Դա իթթիհաթականների կազմակերպածն էր: Նրանք պատժվել են: Ինձ համար անընդունելի է, որ դրա գինը ներկա սերունդները շարունակեն վճարել»[15]: Իթթիհաթականների պատժված լինելու փաստն արձանագրելիս՝ Այշե Քուլինը մոռանում է շեշտել, որ Հայոց ցեղասպանության կազմակերպիչները ժամանակակից Թուրքիայում հերոսացվում են: Ավելին, նախկինում տեղի ունեցածների և նոր սերնդի կապը չընդունող հեղինակը օսմանյան ժառանգության մասին խոսելիս ընդգծում է ներկայի և անցյալի անբաժանելի կապը. «Ես իմ օսմանցի

[13] Ayşe Kulin: Maksadım Ermeniler hak ettikleri için kesildiler demek asla değildi https://t24.com.tr/haber/ayse-kulin-maksadim-ermeniler-hak-ettikleri-icin-kesildiler-demek-asla-degildi,251128 (մուտքի ամսաթիվ՝ 07.08.2020)

[14] 'Artık dindar bir nesil...' http://www.gazetevatan.com/-artik-dindar-bir-nesil-611999-medya (մուտքի ամսաթիվ՝ 08.09.2020)

[15] Ermeni gence aşık Türk kızı ve Umut, https://www.haber7.com/kitap/haber/363152-ermeni-gence-asik-turk-kizi-ve-umut (մուտքի ամսաթիվ՝ 05.08.2020)

պապու գրկում եմ մեծացել: Չենք կարող դա մկրատով կտրել»[16]: Նրա այս խոսքերը մեկնաբանելով՝ թուրքական ԶԼՄ-ներից մեկը նշել էր, որ Թուրքիայի Հանրապետության բոլոր խնդիրների արմատներն «օսմանցի պապու գրկում մեծացած մարդիկ են», որոնց շարքին հոդվածագիրը դասել էր նաև երկրի քաղաքական էլիտային նախագահ Ռ. Թ. Էրդողանի գլխավորությամբ[17]:

Կարելի է փաստել, որ թուրք գրականագետ Հանդե Օղյութը միանգամայն ճիշտ է Ա. Քուլինին բնորոշում որպես «ազգայնական գրող»[18] և նույնիսկ հավելել, որ նրա ստեղծագործություններում ազգայնականությունը հաճախ ազգայնամոլության է վերածվում:

Հայերի և հույների «օտարի» կերպարի քարոզչական ներկայացման օրինակներից է Ա. Քուլինի «Հրաժեշտ. մի առանձնատուն գերյալ քաղաքում (1918-1924)» պատմավեպը: Գրքի պյուժեի հիմքում հեղինակի մորական պապի՝ օսմանյան վերջին ֆինանսների նախարար Ահմեդ Ռեշաթի ընտանիքի պատմությունն է: Ահմեդ Ռեշաթի առանձնատան բնակիչների՝ նախարարի ծեր մորաքրոջ, նրա զարմիկ Քեմալի, կնոջ և երկու դուստրերի, հեռու ազգականուհի-աղախին Մեհփարեի կյանքում տեղի ունեցող կենցաղային վայրիվերումները ներկայացվում են Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին դաշնակիցների Ստամբուլ մտնելուց հետո քաղաքում տիրող իրավիճակի համապատկերում:

Պատմական ռեմարկներ անելով՝ հեղինակն անդրադառնում է Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի համար առանցքային մի շարք կետերի, որոնց շարքում է երիտթուրքերի իշխանության գնահատման խնդիրը: Քեմալը, ով դեռ սուլթան Աբդուլհամիդի կառավարման տարիներին հարել էր Միություն և առաջադիմություն կուսակցությանը, իթթիհադականների քաղաքականությունից հիասթափվելով՝ միանում է քեմալականներին: Սակայն սուլթանի աչքերում նա դեռ իթթիհաթական է համարվում, հայրենիքի դավաճան. «Իթթիհաթականների հետ կապերը շատ արագ էր կտրել, բայց անունն արդեն մնացել էր իթթիհադական

[16] Ayşe Kulin ve Osmanlı dedesi, https://yeniozgurpolitika.net/aythe-kulin-ve-osmanly-dedesi/
[17] Նույն տեղում:
[18] Öğüt H., Ayşe Kulin'in romancılığı: milliyetçi tahayyülde bir muharrire https://books.google.am/books?id=8rhyDwAAQBAJ&pg=PA2000&lpg=PA2000&dq=ay%C5%9Fe+kulin+ermeni+soyk%C4%B1r%C4%B1m%C4%B1&source=bl&ots=YjzGnQ51wz&sig=ACfU3U0NB6EJaUZJDNocUoPS9ZmyD9Ebg&hl=en&sa=X&ved=2ahUKEwjC7KOZmtXpAhVGpYsKHQfqCd44ChDoATACegQICRAB#v=onepage&q=ay%C5%9Fe%20kulin%20ermeni%20soyk%C4%B1r%C4%B1m%C4%B1&f=false (մուտքի ամսաթիվ՝ 07.08.2020)

Քեմալ, կարճ՝ «մեր Ռեշաթի ***իթ*** Քեմալ»[19]: Արժի նշել, որ հեղինակը բավական ընդգծված բացասական վերաբերմունք ունի երիտթուրքերի նկատմամբ: Պատահական չէ, որ գրքում Էնվեր փաշային բնութագրելիս օգտագործում է «Աստծո պատիժ»[20] և «խելագար էնվեր»[21] արտահայտությունները: Իսկ դաշնակիցների մուտքը Ստամբուլ նկարագրելիս՝ Քուլինը գրում է. «հայր, որդի, սուրբ հոգի ծաղրական անունով հայտնի տխրահռչակ եռյակի՝ Միություն և առաջադիմություն կուսակցության առաջնորդներ՝ Թալեաթ, էնվեր, Ջեմալ փաշաների փախուստի իններորդ օրը օկուպանտները հիսունհինգ նավով հայտնվեցին Բոսֆորում»[22]: Երիտթուրքերի քննադատությանը գրքում հակադրվում է Մ. Քեմալի գովերգումը: Հեղինակը Մ. Քեմալի իթթիհաթական լինելու փաստին հակառակ նրան է համարում Թուրքիա պետության գոյության պահպանման միակ երաշխավոր: Այս միտքն է փոխանցում ընթերցողին Քեմալը՝ Ահմեթ Ռեշաթի հետ զրույցում ասելով. «[Մուսթաֆա Քեմալ] փաշան իթթիհաթականներին ատում է ամենաքիչը սուլթանի չափ, սակայն այդ մասին իմացողները քիչ են, նրան վստահելուց բացի այլ ելք չունենք»[23]: Իթթիհաթականների քաղաքականությունից Մ. Քեմալի, ինչպես նաև գրքի հերոս Քեմալի կերպարում ամբողջ թուրքական երիտասարդ զինվորականության հիասթափության մասին հեղինակի թեզը թուրքական դասական ազգայնականության դրսևորում է և քարոզչական հնարք, որ նպատակ է հետապնդում Միություն և առաջադիմության կուսակցության կառավարման տարիների անհաջողությունների, պարտությունների պատասխանատվությունը միայն երիտթուրք ղեկավարների անձերի հետ կապել: Քարոզչական նույն ծիրով շարժվելով՝ Ա. Քուլինը գրում է, որ սուլթան Աբդուլ Համիդի գահընկեցությունից հետո օսմանյան պետության ղեկավարներից և ոչ մեկը չկարողացավ արդարացնել ժողովրդի սպասելիքները: Այս կերպ նա կարծես տարանջատում է 1908-1923 թթ. որպես օսմանյան անցյալից դուրս գտնվող ժամանակաշրջան: Թուրքական պատմության տեսանկյունից այս փուլի առավել սարսափելի դրվագներից է Սարիղամիշի ճակատամարտը:

---

[19] Հեղինակը բառախաղ է օգտագործում՝ թուրքերեն ittihatçı - իթթիհաթական, իսկ it – շուն [ծնթ.Ն. Պողոսյան], Kulin A., Veda:Esir şehirde bir konak, İstanbul, 2016, s. 5.
[20] Նույն տեղում, էջ 17:
[21] Նույն տեղում, էջ 112:
[22] Նույն տեղում, էջ 9:
[23] Նույն տեղում, էջ 35:

«Հրաժեշտ. մի առանձնատուն գերյալ քաղաքում» վեպի հերոսներից Քեմալը, այդ ճակատամարտին մասնակցելով, ականատես է եղել թուրքական բանակի խայտառակությանը, թեև փրկվել է, սակայն հոգեբանական և ֆիզիկական ծանր խնդիրներ է ձեռք բերել: Ռեշաթի մորաքրոջ անունից Ա. Քուլինը նշում է, որ Ստամբուլում իրենց տաք տներում մնացած պաշտոնյաներն իրավունք չունեն դատել մարտի դաշտում կռված զինվորին. «Իմ թոռը հայրենիքի դավաճա՞ն, ձեզնից ո՞վ է գնացել և սառել այդ սպիտակ դժոխքում հանուն հայրենիքի: Նա դավաճան է, իսկ դու՝ հերոս, հա՞», - դիմում է մորաքույրը Ռեշաթին[24]: Թուրք զինվորների շրջանում Սարիղամիշի պարտության նկատմամբ վերաբերմունքը Ա. Քուլինը ներկայացնում է Քեմալի և նրա ապագա կնոջ Մեհփարեի զրույցում: Երբ Մեհփարեն Քեմալին խնդրում է պատմել իրեն Սարիղամիշի մասին, նա պատասխանում է. «Ինչքան էլ պատմեմ, քիչ է: Չես կարողանա տեսնել սրտիս վերքը, իմ բողոքը չես կարողանա հասկանալ. ընկերներս սառեցին-մեռան, սոված գայլերի և հայ *չեթեների*[25] բաժին դարձան այդ օպերացիայի ընթացքում, բայց ինձ տխրեցնողը, Մեհփարե, այլ բան է՝ այդ կռիվը հայրենիքի համար չէր, այլ գերմանացիների»[26]: Այսպիսով, հեղինակը մի կողմից ընդգծում է պատերազմում Օսմանյան կայսրության ներքաշման սխալ լինելը, մյուս կողմից էլ բաց չի թողնում առիթը թուրքերի «կոտորած» կազմակերպելու մեղադրանք ներկայացնել հայերին:

Վեպի սյուժեում նման թաքնված և բացահայտ պիտակավորումները քիչ չեն: Ստամբուլ դաշնակիցների մուտքը նկարագրելիս Ա. Քուլինը գրում է. «Հույները (Rum) վերցնելով հունական (Yunan)[27] դրոշները՝ ողջունում էին զավթիչներին: Խեղճ ստամբուլցիները ստիպված էին հանդուրժել, որ ֆրանսիացի հրամանատարը սպիտակ ձիով հաղթական Ֆաթիհի նման Բեյօղլուն վերից վար անցնի փոքրամասնությունների ողջույների ու

[24] Նույն տեղում, էջ 4:

[25] Չեթե – թուրք. çete –հրոսակախումբ: Այսպես էր պիտակում և շարունակում է պիտակել թուրքական կառավարությունը ազատագրական պայքար վարող բոլոր հայկական կազմակերպություններին

[26] Kulin A., նշված աշխ., էջ 111.

[27] Այշե Քուլինը կրկին բառախաղ է օգտագործում՝ կիրառելով Rum- թուրքաբնակ հույն և Yunan- հույն եզրերը ընդգծելու համար թուրքական հասարակության մեջ ընդունված այն կարծրատիպը, որ թուրքահպատակ հույների և Հունաստանի միջև անջրպետ կա: Նմանատիպ մոտեցման ենք ականատես լինում նաև հայերի դեպքում, երբ փորձ է արվում տարանջատել «լավ» հայերին Հայաստանում և հատկապես սփյուռքում ապրող «վատ» հայերից:

ծափահարությունների ներքո: Ստամբուլի փոքրամասնությունները դարերի վրեժը կարծես առնել ցանկանալով՝ համագործակցում էին զավթիչների հետ, մուսուլմանների մասին զեկույցներ էին գրում, տեղ-տեղ բարձրացող դիմադրությունն անմիջապես պատժվում էր զավթիչների կողմից, դիմադրողներին սարսափելի տանջանքների էին ենթարկում կենտրոնում և ոստիկանատներում»[28]: Դիպաշարում Ա. Քուլինը ներկայացնում է թուրքերին վիրավորող մի քանի դեպք. «Տրամվայում տիկին Դիլրուբային [ընտանիքի ազգականներից մեկը] մի քրիստոնյա մադամ ասել է. «Դուք բավական նստեցիք, վեր կացեք, տիկի՛ն, նստելու հերթը մերն է»[29] կամ «հույներն այնքան երես են առել, որ Քարաքոյում մի հույն փայտով սպառնալով դուրս է հանել իրեն պատկանող սրճարանը ստուգել փորձող համայնքապետին: Հայերն ու հույները սադրում են մուսուլմաններին տաբեր ճանապարհներով»[30]: Հույների ու հայերի հաղթական կերպարին Քուլինը հակադրում է մուսուլմանների դժբախտ վիճակը. «Փողոցում իրենց գործերով գնացող մուսուլմանները գլխիկոր էին, ուսերը ծուռը էին, դեմքերը՝ կախ, իսկ քրիստոնյաներինը՝ ժպտուն»[31]:

Փոքրիկ կենցաղային դրվագների համատեքստում հեղինակը նաև շեշտադրում է ոչ մուսուլմանների օսմանյան հասարակության «հինգերորդ շարայուն» լինելու միտքը: Այշե Քուլինը գրում է, որ հայ և հույն պատրիարքները ամեն ինչ անում են, որպեսզի Ստամբուլից հետո օկուպացվի նաև ողջ Թուրքիան[32]: Ինչ վերաբերում է դավաճանության առավել առարկայական դրսևորումներին, ապա վեպում ասվում է, որ անգլիական համազգեստ հագած հայերը և հույները որպես լրտես են աշխատում անգլիացիների համար[33] և, օտարերկրացի ձևանալով, հարձակվում կանանց ու աղջիկների վրա[34]: Ա. Քուլինը բարբարոսության դրսևորում է համարում այն, որ «հույներն Այա Սոֆիայում սրբապատկերներ էին կախում»[35]: Սուրբ Սոֆիա տաճարի հիշատակումը հատկապես կարևոր է, քանի որ նմանատիպ դրվագների ներառումը պաշտոնական քարոզչությանը ծառայող և իսկապես մեծաթիվ լսարան ունեցող գրքերում կարելի է

[28] Kulin A., նշված աշխ., էջ 8.
[29] Նույն տեղում, էջ 9:
[30] Նույն տեղում, էջ 17:
[31] Նույն տեղում, էջ 43:
[32] Նույն տեղում, էջ 11:
[33] Նույն տեղում, էջ 27:
[34] Նույն տեղում, էջ 79:
[35] Նույն տեղում, էջ 124:

դիտարկել որպես սեփական հասարակության մեջ կրոնական մոլեռանդության բորբոքման փորձ և Սուրբ Սոֆիան կրկին մզկիթի վերածելու նախապատրաստական փուլի մաս:

Պաշտոնական քարոզչական թեզերին տուրք տալով՝ Ա. Քուլինը վեպում շեշտում է նաև, որ թուրքական հասարակության բոլոր շերտերում հավատարիմ հայեր ու հույներ էլ կային: Նման օրինակների շարքում են Ահմեթ Ռեշաթի հույն այգեպանն ու սպասուհին, ինչպես նաև թուրքական մեջլիսում և կառավարության կազմում աշխատող ոչ մուսուլմանները: Վեպում գործող էպիզոդիկ, բայց կարևոր դերակատար է նավահանգստի պետ հայազգի Փանդիկյան-էֆենդին, ով օգնում է հույներից գողացված զենքերը հասցնել քեմալականներին «Արարատ» խորհրդանշական անունը կրող նավով: Նրա արարքը շատ է հուզում Ահմեթ Ռեշաթին, ում ներքին մենախոսությունն ենք լսում գրքում. «...որոշ հայեր ֆրանսիական համազգեստով իրենց հարյուր տարվա հարևանին են մատնում, որոշներն էլ՝ հարյուրավոր իսկական մուսուլմաններից ավելի պատրաստակամ, անում են հնարավոր ամեն ինչ հանուն հայրենիքի փրկության»[36]: Փանդիկյանի անօրինակ «հավատարմության» կողքին սեփական հայրենիքի ազատագրման համար պայքարող հայերի «դավաճանությունը» ընթերցողի համար առավել ակներև է դառնում: Ուշագրավ է նաև, որ վեպում չկա որևէ, նույնիսկ մակերեսային անդրադարձ հայկական և հունական կոտորածներին, տեղահանությանը և հակաքրիստոնեական այն մթնոլորտին, որ տիրում էր առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում և դրան հաջորդած տարիներին:

Այսպիսով, Այշե Քուլինը «Հրաժեշտ. մի առանձնատուն գերյալ քաղաքում» վեպում շարունակում է թուրքական ազգայնամոլական գրականության ավանդույթները՝ թիրախավորելով ոչ մուսուլմաններին որպես «թշնամի» հանրույթ: Միևնույն ժամանակ տուրք տալով թուրքական մերժողականության դասական պնդումներին՝ նա փորձում է տարանջատել «վատ» ու «լավ» քրիստոնյաներին և ցույց տալ, որ հայերի, հույների և այլ ժողովուրդների հակաօսմանյան շարժումները ոչ թե երկրի ներսում դրության անտանելիության պատճառով առաջ եկած ինքնաբուխ զարգացումներ էին, այլ մեծ տերությունների խաղերին քրիստոնյաներին խառնելու, նրանց հրահրելու քաղաքականության արդյունք:

[36] Նույն տեղում, էջ 279:

THE IMAGE OF "OTHER" IN THE NOVEL " *FAREWELL*: A MANSION IN OCCUPIED ISTANBUL" BY AYŞE KULİN

Naira Poghosyan

(Summary)

During XX century non-Muslim citizens of Turkey have always been targatted as "others" or even "enemies" in the social and cultural discourse of the country. The policy of discirimination, carried out by the Turkish authorities, has had significant impact on the representation of non-Muslims in the Turkish literature. So, it is not surprising that negative images of non-Muslims are quite widespread in the Turkish prose. This paper aims to shed light on the main anti-Armenian and anti-Greek propaganda patterns utilized by the modern Turkish writer Ayşe Kulin in the novel *"Farewell: a mansion in occupied Istanbul*".

ОБРАЗ "ЧУЖОГО" В РОМАНЕ АЙШЕ КУЛИН "ПРОЩАНИЕ: ОСОБНЯК В ПЛЕНЕННОМ ГОРОДЕ (1918-1924)"

Наира Погосян

(Резюме)

На протяжении XX века образ немусульманина в турецком общественном и культурном дискурсе всегда отождествлялся с образом "чужого" и даже "врага". Политика дискриминации, проводимая турецкими властями, во многом повлияла на образ немусульманина, представленный в турецкой литературе. Поэтому неудивительно, что отрицательный образ немусульманина широко распространен в турецкой прозе. Цель данной статьи представить основные антиармянские и антигреческие пропагандистские подходы, примененные современной турецкой писательницей Айше Кулин в романе "Прощание: особняк в пленном городе (1918-1924)".